

դառնայ ընդհանուր ցեղապետութեանց կռուածադիկ ու քրքրական բանաստեղծութեանց նիւթը: Տեսակ մը Տիկնային տիրապետութիւն՝ բոլոր ցեղերու վրայ:

Հակառակ պարագային՝ տգեղ Քրդուհին իր ցեղապետական դիրքի շնորհիւ ամուսնանալով ու է ցեղապետի հետ, թէև իր հօր ցեղի, խնամիական պաշտպանութիւնը կընծայէ այդ ցեղապետին: Բայց միեւնոյն ժամանակ պակաս մը կը թողու իր քիւրդ ամուսնու գեղագիտական հաճայքներու և սիրային զգացումներու մէջ, այս հանգամանքներուն, ամուսին գեղապետը եթէ յարգանքի պակաս մը ցուցնէ և կամ սիրային լիառատ վերաբերմունքի կասկած մը արթնցնէ Քիւրդ խաբունի մէջ, վերջինս օգտուելով իր Տիկնութեան իրաւունքէն ու իր հօրենական ազդեցութենէն, վրէժը կը լուծէ անմիջապէս ցեղապետէն, և հետեւաբար ցեղէն: Որով՝ այս ու այն պարագային՝ Քիւրդ Հեղինէները երբեք եւ չեն կենար Տրովական պատերազմներ առաջ բերելէ Քիւրդ ցեղապետութեանց մէջ:

Բայց փրկութեան ճանապարհը գտնուած է. Քիւրդ ազնուականը գերազանցօրէն բարձր կը գտնէ ունենալ հայ ցեղիկի, որ իր գեղեցկութիւնով, շնորհով, և ուրիշ արժանաւորութիւններով Քրդուհիէն անհամեմատ բարձր է:

Բարձրութեան առաջին պայմանը կը կազմէ իրեն համար այն՝ որ նա կարող է նախ ազնուացնել իր ցեղը:

Ցեղի ազնուացման մասին մեծ գաղափար ունի նա. եթէ կը հաշուէ իր արարական ձիւրու մամն ու պապը սերունդէ սերունդ, ինչպէս հաշուի չառնէ իրենը. ինչպէս ցեղերու մէջ չը պատմուի որ նա խլեց, արեան ու կրակների մէջէն բերաւ իրեն համար հայ գեղուհին:

Իսկ հայ գեղուհին, հայ աղջիկը կ'ատէ Քիւրդը ընդհանրապէս. որ նա հրի ու սրի ճարակ կը դարձնէ իր ազգի դաւակները, կը յախշտակէ հարստութիւնը ու աշխատանքի արդիւնքը. որ նա քրիստոնեայ եկեղեցւոյ սրբութիւնները իր աւարին նիւթ կը դարձնէ, որ խաղաղ կեանք չունենալով՝ ատանդական ու արկածախնդիր է, որ նա վիրջապէս հայ չէ